



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

29.12.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/121

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամ
Բողոք բերող՝ «Յուքոմ» ՓԲԸ

Մասնակցությամբ՝
«Յուքոմ» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ՝ Գ. Աթայանի, Գ. Նազարյանի և Դ. Եփրեմյանի
«Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի
ներկայացուցիչներ՝ Յու. Զաքարյանի և Ա. Մելքոնյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԲՊՀ-ԳՀԾՁԲ-20/23» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ,
համացանցային ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ
քննող անձ)՝ քննության առնելով «Յուքոմ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից
08.12.2020թ.-ի ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերություն ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. Չեղյալ հայտարարել «ԲՊՀ-ԳՀԾՁԲ-20/23» ծածկագրով գնահատող հանձնաժողովի 2020թ.-ի դեկտեմբերի 3-ի նիստի՝ «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը հետագա գնահատման համար ընդունելի համարելու և վերջինիս բանակցությունների հրավիրելու մասին կայացրած որոշումը (թիվ 2 արձանագրությունը),

2. Չկայցած հայտարարել «ԲՊՀ-ԳՀԾՁԲ-20/23» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 08.12.2020թ.-ին:

09.12.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲԲԱ-ԼՕ-2020/121 համարի ծածկագիրը:

17.12.2020թ.-ին և 29.12.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 17.12.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 29.12.2020թ.-ին:

2. «Յուքոմ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Յուքոմ» ՓԲԸ-ն 08.12.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ «Պարվիրատու») կողմից ԲՊՀ-ԳՀԾՁԲ-20/23 ծածկագրով 25.11.2020թ.-ին գնանշման հարցման մասին հայտարարություն է հրապարակվել, որի նպատակն էր ընտրված մասնակցին սահմանված կարգով առաջարկել կնքել համացանցային ծառայությունների ձեռքբերման պայմանագիր: Գնանշման հարցումն իրականացվել է մեկ փուլով՝ էլեկտրոնային գնումների «Armeps» համակարգի միջոցով (www.armeps.am):

Պարվիրատուի կողմից համացանցային ծառայությունների ձեռքբերման «Armeps» համակարգում 25.11.2020թ.-ին հայտարարված և 02.12.2020թ.-ին բացված ԲՊՀ-ԳՀԾՁԲ-20/23 մրցույթին (այսուհետ՝ «Մրցույթ») «Յուքոմ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ «Ընկերություն»), որպես ներկայիս մատակարար, չի կարողացել մասնակցել առաջացած տեխնիկական խնդրի պատճառով, մասնավորապես՝ Մրցույթի հայտը հնարավոր չի եղել ներբեռնել

«Armeps» համակարգ՝ Մրցույթի կառուցվածքի սխալ (թերի) լինելու պատճառով: Պետք է նշել, որ Մրցույթի կառուցվածք վերբեռնվում է «Armeps» համակարգից: Այսինքն Կոնսուլտանտի կողմից կապված է եղել բացառապես «Armeps» համակարգի հետ և Ընկերությունը այն շտկելու որևէ հնարավորություն չի ունեցել: Վերոնշյալ Կոնսուլտանտի կողմից կարող էր վերացվել (շտկվել) միայն այդ համակարգը սպասարկող «ԱՅՅՈՒՆԵԹՎՈՐՔՍ» ՍՊԸ ընկերության (մասնագետների) կողմից, որը սակայն չի արվել:

Հայտը փորձել ենք ներբեռնել համակարգ 01.11.2020թ.-ի ժամը 19:00-ից մինչև 02.11.2020թ.-ի ժամը 15:30-ը, սակայն «Armeps» համակարգը թույլ չի տվել դա անել: Այդ ժամանակահատվածում բազմիցս կապ ենք հաստատել «Վալերի Բոյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի գնումների բաժին (նշված հեռախոսահամարներով՝ 37411300-111/255,254; 043407409; 093018128) և տեղեկացրել խնդրի մասին:

02.12.2020թ. Ընկերության կոմերցիոն տնօրինության աշխատակից Դավիթ Եփրեմյանը «ԲՊՀ հիմնադրամ» էլեկտրոնային փոստի հասցեով (ժամը՝ 14.39-ին) էլեկտրոնային նամակ է ուղերկել՝ նշելով, որ Ընկերությունը չի կարողանում ներկայացնել մրցույթի հայտը՝ մրցույթի կառուցվածքի սխալի պատճառով:

Այնուհետև կապ ենք հաստատել ՀՀ ֆինանսերի նախարարության համապատասխան բաժին (նշված հեռախոսահամարներով՝ 011289320; 093662239), որն իր հերթին դիմել է «Armeps» համակարգը սպասարկող «ԱՅՅՈՒՆԵԹՎՈՐՔՍ» ՍՊԸ ընկերությանը, ում կողմից մինչև հայտերի բացումը այդպես էլ որևէ պատասխան չի ստացվել: Այդ ընթացքում փորձել ենք Մրցույթի հայտը ներբեռնել «Armeps» համակարգ այլ մուտքանուններով, սակայն չի ստացվել:

Այն, որ Կոնսուլտանտի կողմից կապված է եղել համացանցային ծառայությունների ձեռքբերման «Armeps» համակարգի հետ հավաստվում է նաև այն փաստով, որ «Armeps» համակարգ Մրցույթի հայտ չի կարողացել ներբեռնել նաև մեկ այլ ընկերություն («ԱՐՓԻՆԵՏ» ՍՊԸ), որը ևս պատրաստվում է բողոքարկել Մրցույթի արդյունքները (թիվ 2 արձանագրությունը):

Ապացույց առ այն, որ ԲՊՀ-ԳՀԾՁԲ- 20/23 ծածկագրով հայտարարված մրցույթի հայտը չներբեռնվելու պատճառը կապված չի եղել Ընկերության որևէ համակարգի կամ մարդկային գործոնի (աշխատանքի) հետ, հանդիսանում է այն փաստը, որ Ընկերությունը 02.12.2020թ.-ին կարողացել է Պարվիրատուի կողմից հայտարարված ԲՊՀ-ԳՀԾՁԲ-20/22 ծածկագրով հեռահաղորդակցության ծառայությունների ձեռքբերման մրցույթի փաթեթը

անխնդիր ներբեռնել «Armeps» համակարգ (դա երևում է սույն բողոքին կից ներկայացվող փեսաձայնագրությունում, որը կարող է հավաստել նաև Պատվիրատուն):

(II) Բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները.

ԲՊՀ-ԳՀԾՁԲ- 20/23 ծածկագրով գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ «Հանձնաժողով») խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը:

Բողոքի նշված հիմքը հիմնավորվում է հետևյալ փաստարկներով.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ «Օրենք») 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա Ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Ինչպես նշվեց վերոգրյալում՝ Ընկերության առջև ծառայած փաստացի խնդրի մասին Ընկերությունը պատշաճ կերպով փորձեց արդարացի և ինչպես Պատվիրատուին, այնպես էլ ՀՀ ֆինանսների նախարարության համապատասխան բաժնին, իսկ վերջինս էլ «Armeps» համակարգը սպասարկող «ԱՅՅՈՒՆԵԹՎՈՐՔԱ» ՍՊ ընկերությանը, սակայն վերջիններիս կողմից փաստացի որևէ քայլեր չեն ձեռնարկվել առկա տեխնիկական խնդիրը վերացնելու համար, ինչի արդյունքում Ընկերությանը զրկվել է Մրցույթին մասնակցելու հնարավորությունից: Այլ խոսքով՝ չվերացնելով տեխնիկական խնդիրը Ընկերությանը դուրս են թողել Մրցույթից ու տրամադրություն է ստեղծվում, որ դա արվել է միտումնավոր:

Այդ մասին է վկայում այն փաստը, որ 03.12.2020թ.-ին տեղի ունեցած ԲՊՀ-ԳՀԾՁԲ- 20/23 ծածկագրով գնահատող հանձնաժողովի նիստում Հանձնաժողովը չի արձանագրել, որ «Յուքոմ» փակ բաժնետիրական ընկերությունը ցանկացել է մասնակցել Մրցույթին, սակայն «Armeps» համակարգը (առկա տեխնիկական խնդրի պատճառով) թույլ չի տվել ներբեռնել Մրցույթի հայտը (որի վերաբերյալ, թե գրավոր և թե բանավոր Պատվիրատուն պատշաճ կարգով ծանուցվել էր Ընկերության կողմից):

Տվյալ պարագայում Հանձնաժողովի կողմից «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ի հայտը հետագա գնահատման համար ընդունելի համարելու մասին որոշումը ընդունվել է օրենսդրական պահանջների խախտմամբ, որով ըստ էության խախտվել են Օրենքով

սահմանված գնման գործընթացը միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման ցանկացած անձի համար գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության հիմնարար սկզբունքները, ինչի արդյունքում սահմանափակվել են Ընկերության իրավունքները և հանգեցրել մասնակիցների միջև մրցակցության խաթարմանը:

Մեր կողմից ներկայացված սույն բողոքը հիմնավորվում է հետևյալ ապացույցներով՝

1) 02.12.2020թ.-ին Պատվիրատուին ուղարկված էլեկտրոնային նամակով, որտեղ նշել ենք առկա խնդրի մասին:

2) Մրցույթին մասնակցելու Ընկերության անհնարինությունն արձանագրված տեսաձայնագրությամբ, որտեղ փաստացի արձանագրված է, որ Ընկերությունը կատարել անհրաժեշտ բոլոր գործողությունները՝ Մրցույթի հայտը «Armeps» համակարգ ներբեռնելու համար, սակայն համակարգը թույլ չի տվել դա անել:

3) ՀՀ ֆինանսերի նախարարության հապատասխան բաժին կատարված հեռախոսազանգերի (093662239) քաղվածքը (որին զանգահարել և նշել ենք առկա խնդրի մասին և խնդրել ենք լուծել խնդրիրը):

4) Մրցույթի հայտի ոչ ամբողջական (թերի) կառուցվածքով, ինչը հնարավորություն չի տվել Ընկերությանը էլեկտրոնային կարգով ներբեռնել (ներկայացնել) Մրցույթի հայտը:»:

Ելնելով վերոգրյալից Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. Չեղյալ հայտարարել «ԲՊՀ-ԳՀԾՁԲ-20/23» ծածկագրով գնահատող հանձնաժողովի 2020թ.-ի դեկտեմբերի 3-ի նիստի՝ «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը հետագա գնահատման համար ընդունելի համարելու և վերջինիս բանակցությունների հրավիրելու մասին կայացրած որոշումը (թիվ 2 արձանագրությունը),

2. Չկայցած հայտարարել «ԲՊՀ-ԳՀԾՁԲ-20/23» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգը:

3. «Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 09.12.2020թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/18331-2020 գրությամբ դիմել է «Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամ-ին՝

հնարավորություն տալով «Յուքոմ» ՓԲԸ-ի կողմից 08.12.2020թ.-ի ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է 17.12.2020թ.-ին հրավիրված նիստին:

Պատվիրատուն 11.12.2020թ.-ի թիվ 01-20/811 գրությամբ հայտնել է նաև հետևյալը.

«Սույն գրությամբ հայտնում ենք Ձեզ, որ «Վ. Բոյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամը «ԲՊՀ-ԳՀԾՁԲ-20/22» համացանցային ծառայությունների ձեռքբերման շրջանակներում թույլ չի տվել խտրականության որևէ դրսևորում մասնակիցների նկատմամբ:

Տեղեկանալով մրցույթի կառուցվածքի մեջ առկա տեխնիկական խնդրի մասին «Յուքոմ» ՓԲԸ-ի նամակից, ԲՊՀ-ի գնումների համակարգողը կապ է հաստատել «Armeps» համակարգի ծրագրային սպասարկման ընկերության և ՀՀ ֆինանսների նախարարության համապատասխան ստորաբաժանման հետ և հայտնել խնդրի մասին: Ի պատասխան համալսարանին տեղեկացրել են, որ համակարգը չունի տեխնիկական խնդիր: Դրա մասին է վկայում նաև այն փաստը, որ նույն ժամանակ «Արմենիա Տելեկոմ» ՓԲԸ-ն ներբեռնել է իր հայտը:

Միևնույն ժամանակ հայտնում ենք, որ չունենք մրցույթը լուծարելու որևէ օրինական հիմք, քանի որ 02.12.2020թ.-ի ժամը 09:30-ի դրությամբ մրցույթին ներկայացվել է մեկ հայտ:

Հարկ ենք համարում նաև ընդգծել, որ «Վ. Բոյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամին անհրաժեշտ է մինչև տարեվերջ ձեռք բերել համացանցային ծառայություններ, քանի որ «Յուքոմ» ընկերության հետ համացանցային ծառայությունների մատուցման ներկա պայմանագրի ժամկետը ավարտվում է, իսկ վերոհիշյալ ծառայությունների բացակայությունը կհանգեցնի համալսարանի բնականոն աշխատանքի խաթարմանը՝ ներառյալ ուսումնական գործընթացի առցանց կազմակերպման խնդիրների:

Ելնելով վերը նշված հանգամանքներից՝ խնդրում ենք Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրին տալ հրատապ լուծում:»:

4. ԳԲՔԱ-LO-2020/121 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար համացանցային ծառայությունների ձեռքբերման նպատակով 25.11.2020թ.-ին հայտարարվել է «ԲՊՀ-ԳՀԾՁԲ-20/23» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հայտերի ներկայացման և հայտերի բացման նիստի օր է սահմանվել մինչև 02.12.2020թ.-ին ժամը 16:00-ն ներառյալ:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ նաև Հանձնաժողով) 03.12.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ սահմանված կարգով հայտ է ներկայացրել միայն «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ն:

iv. Բողոքներ քննող անձը 11.12.2020թ.-ին թիվ Ն/ԲԲԱ-ԼՕ/1/4076-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և խնդրել է հայտնել, արդյո՞ք հնարավոր է «Յուքոմ» ՓԲԸ-ի կողմից հայտը չներկայացնելու պատճառ հանդիսանալ www.armeps.am համակարգի (01.11.2020թ.-ի ժամը 19:00-ից մինչև 02.11.2020թ.-ի ժամը 15:30-ը) խափանումներով աշխատելը, թե՞ ոչ: Եթե այո, ապա խնդրում եմ հայտնել խափանման պատճառների մասին տեղեկատվություն:

v. Ի պատասխան վերոնշյալ գրության, ՀՀ ֆինանսների նախարարությունը 16.12.2020թ.-ին թիվ Ն/26-1/24164-2020 գրությամբ հայտնել է, որ «Յուքոմ» ՓԲԸ-ի բարձրացրած խնդրի կապակցությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը դիմել է համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությանը:

Վերջինս ուսումնասիրելով խնդիրը տեղեկացրել է, որ «ԲՊՀ-ԳՀԾՁԲ-20/23» ծածկագրով ընթացակարգի կառուցվածքը պատվիրատուի կողմից ձևավորվել է թերի, ինչի արդյունքում մասնակիցների կողմից հայտերի պատրաստման գործընթացը կարող էր ընթանալ ծրագրային սխալով՝ խոչընդոտելով հայտերի պատրաստման բնականոն ընթացքին:

Միաժամանակ հայտնել են նաև, որ գրությամբ ներկայացված խնդիրը չի հանդիսանում համակարգի խափանման արդյունք՝ armeps համակարգն աշխատել է առանց խափանումների, որի միջոցով հայտերի ներբեռնման տեխնիկական խնդիրներ չեն գրանցվել, այլ հանդիսանում է վերոհիշյալ ընթացակարգի ոչ լիարժեք XML կառուցվածքի ստեղծման արդյունք:

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Յուքոմ» ՓԲԸ-ի կողմից 08.12.2020թ.-ին ներկայացված բողոքն հիմնավոր է և ենթակա բավարարման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն.

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում

ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ... հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի

ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

Դրան համապատասխան, քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են՝

1) օրենքով նախատեսված պայմանագրերից և այլ գործարքներից, ինչպես նաև այն պայմանագրերից ու գործարքներից, որոնք թեև օրենքով նախատեսված չեն, սակայն դրան չեն հակասում.

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերից, որոնք օրենքով նախատեսված են որպես քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմք.

3) քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանող դատական ակտից.

4) օրենքով թույլատրվող հիմքերով գույք ձեռք բերելու հետևանքով.

5) գիտության, գրականության, արվեստի ստեղծագործություններ, գյուտեր և մտավոր գործունեության այլ արդյունքներ ստեղծելու հետևանքով.

6) այլ անձին վնաս պատճառելու հետևանքով.

7) անհիմն հարստացման հետևանքով.

8) քաղաքացիների և **իրավաբանական անձանց այլ գործողությունների հետևանքով.**

9) այնպիսի իրադարձությունների հետևանքով, որոնց հետ օրենքը կամ այլ իրավական ակտը կապում է քաղաքացիական իրավական հետևանքների առաջացում:

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Վալերի Բոյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար համացանցային ծառայությունների ձեռքբերման նպատակով 25.11.2020թ.-ին հայտարարված «ԲՊՀ-ԳՀԾՁԲ-20/23» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի ներկայացման և հայտերի բացման նիստի օր է սահմանվել մինչև 02.12.2020թ.-ին ժամը 16:00-ն ներառյալ: Հանձնաժողովի 03.12.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ սահմանված կարգով հայտ է ներկայացրել միայն «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ն:

Բողոքներ քննող անձը 11.12.2020թ.-ին թիվ Ն/ԲՔԱ-ԼՕ/1/4076-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և խնդրել է հայտնել, արդյո՞ք հնարավոր է «Յուրոմ»

ՓԲԸ-ի կողմից հայտը չներկայացնելու պատճառ հանդիսանալ www.armeps.am համակարգի (01.11.2020թ.-ի ժամը 19:00-ից մինչև 02.11.2020թ.-ի ժամը 15:30-ը) խափանումներով աշխատելը, թե՛ ոչ: Եթե այո, ապա խնդրում եմ հայտնել խափանման պատճառների մասին տեղեկատվություն:

Ի պատասխան վերոնշյալ գրության, ՀՀ ֆինանսների նախարարությունը 16.12.2020թ.-ին թիվ Ն/26-1/24164-2020 գրությամբ հայտնել է, որ «Յուքոմ» ՓԲԸ-ի բարձրացրած խնդրի կապակցությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը դիմել է համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությանը:

Վերջինս ուսումնասիրելով խնդիրը տեղեկացրել է, որ «ԲՊՀ-ԳՀԾՁԲ-20/23» ծածկագրով ընթացակարգի կառուցվածքը պատվիրատուի կողմից ձևավորվել է թերի, ինչի արդյունքում մասնակիցների կողմից հայտերի պատրաստման գործընթացը կարող էր ընթանալ ծրագրային սխալով՝ խոչընդոտելով հայտերի պատրաստման բնականոն ընթացքին:

Միաժամանակ հայտնել են նաև, որ գրությամբ ներկայացված խնդիրը չի հանդիսանում համակարգի խափանման արդյունք՝ armeps համակարգն աշխատել է առանց խափանումների, որի միջոցով հայտերի ներբեռնման տեխնիկական խնդիրներ չեն գրանցվել, այլ հանդիսանում է վերոհիշյալ ընթացակարգի ոչ լիարժեք XML կառուցվածքի ստեղծման արդյունք:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, ինչպես նաև գնահատելով ու հետազոտելով գործում առկա ապացույցները, Ընկերության ներկայացուցիչների տված բացատրությունները, թույլ է տալիս եզրակացնել, որ «Յուքոմ» ՓԲԸ-ի կողմից ձեռնարկվել են հնարավոր բոլոր գործողություններն՝ ուղղված հայտը ժամանակին ներկայացնելուն, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով պայմանավորված, հնարավոր չի եղել դրանք հասցնել տրամաբանական ավարտին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լուսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Յուքոմ» ՓԲԸ-ի ներկայացրած բողոքը հիմնավոր է և պետք է բավարարել՝ վերականգնելով Ընկերության գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունքը, որի արդյունքում կապահովվի Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի դրույթներով սահմանված սկզբունքների կիրառումը:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Յուրում» ՓԲԸ-ի կողմից 08.12.2020թ.-ի-ին թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/121 ծածկագրով ներկայացրած բողոքը բավարարել:

2. Պարտավորեցնել «Վալերի Բոյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի կողմից համացանցային ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԲՊՀ-ԳՀԾՁԲ-20/23» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

- դադարեցնել 2020թ.-ի դեկտեմբերի 3-ի նիստի՝ «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը հետագա գնահատման համար ընդունելի համարելու և վերջինիս բանակցությունների հրավիրելու մասին կայացրած որոշումը (թիվ 2 արձանագրությունը),

- «ԲՊՀ-ԳՀԾՁԲ-20/23» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ

ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝

ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ

